Գրախոսություն

«Գիտաֆանտաստիկ ժանր »

Սովորող՝Սամվել Շահվերդյան

Ղեկավար՝ Մարիետ Սիմոնյան

Գրախոս՝ Լիլիթ Յախինյան

Մարդկության պատմության ամենաառաջին էջից սկսած, մարդ արարածն ունեցել է երևակայություն, որն էլ, բանականության հետ միասին որոշիչ է եղել հետագա էվոլյուցիայի գործում։

Մենք հավատում ենք այն ամենին ինչը չկա, ինչը կա, ու ինչ ստեղծում ենք մեր երևակայությամբ։

Թերևս, գիտաֆանտաստիկ ժանրը <ֆիլմերում, գրական ստեղծագործություններում, մեր մտքերում> հենց մեր հորինած հավատալիքն է. կարծես ամեն ինչ իրական է, ապացուցելի, բայց ոչինչ իրականում չենք կարող ապացուցել, շոշափել, և ամենակարևորն է, չենք կարող հերքել։

Աշխատանքի հեղինակի այս տողերը հաստատում և հերքում են ժանրի գոյությունը։

«Ես <կարող էր լինել ՄԵՆՔ> այս հետազոտական աշխատանքը կատարելիս եկա այն եզրակացությանը, որ մարդկությունը չի կարողացել հասկանալ, գտնել տարբեր հարցերի պատասխանները և սկսել է ենթադրություններ անել, և միայն ժամանակի ընթացքում են գիտության կամ այլ ոլորտներում աշխատող մարդիկ գտել տարբեր հարցերի պատասխանները։»

Սամվել Շահվերդյանի աշխատանքը գնահատում եմ հետևյալ կետերով

1. Կառուցվածքային է
2. Ունի հստակ առանձնացված բովանդակությամբ գլուխներ։
3. Հեղինակը կարևորել է իր կարծիքը, որը շատ ողջունելի է։
4. Երևում է, որ աշխատանքը «աշխատած է», ինքնուրույն է արված։
5. Երևում է ղեկավարի և սովորողի համագործակցությունը։

Սամվել Շահվերդյանի աշխատությունը բաղկացած է վեց գլուխներից, ներածությունից, վերջաբանից։ Որպես գրախոսական նշեմ մի քանի բացթողում.

1. Աշխատանքը չունի գրականության ցանկ
2. Մարվելի ֆիլմերը գիտաֆանտաստիկ ժանր չեն ներկայացնում, այլ Ֆենթեզի։ Տես վիկիդարանում՝ Ֆենթըզի (անգլ.՝ fantasy - «երևակայություն»), գրականության ֆանտաստիկ ժանրի տեսակ, որտեղ օգտագործվում են հեքիաթային և առասպելական կերպարներ։ Այս ժանրը իրականության մեջ ուրույն պատմություն է ներկայացնում, որի բացակայության դեպքում իրականությունը չի փոխվի։ Մարվելի ֆիլմերի բոլոր աշխարհները հորինովի են, կամ էլ ադապտացված են պատմությանը։
3. Եթե ուսումնասիրում ենք գիտահետազոտական ժանրը, ապա պետք է նշենք այնպիսի «դասական» գրողների, ինչպիսիք են՝ Դուգլաս Ադամսը «Ավտոստոպով գալակտիկայով մեկ», Եվգենի Զամյատինը «Մենք»։ Վստահ եմ , որ հեղինակը մյուս հետազոտական աշխատանքներում, եթե շարունակի թեման, կկարդա այս գրքերը։
4. Կան տեխնիկական փոքր բացթողումներ

Այսպիսով սովորողի աշխատանքը համարում եմ 10-րդ դասարանի սովորողի համար բավարար և երաշխավորում եմ պաշտպանության համար։

Լիլիթ Յախինյան